ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/27

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2018թ. թիվ 04/26-3/2931-18 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 15.02.2018թ. թիվ 40-358 գրության հիման վրա, 19.02.2018թ. թիվ 04/26-3/2931-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) 15.02.2018թ. թիվ 40-358 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 05.04.2017թ. կնքված թիվ 04/068 պայմանագիրը լուծվել է միակողմանի Պատվիրատուի կողմից՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները մասամբ չկատարելու պատճառով:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/27 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/27 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 05.04.2017թ. կնքվել է «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10» ծածկագրով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի մատակարարման թիվ 04/068 պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հանդերձանք (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

3. Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մինչև մայիս ամիսը ներառյալ մատակարարել համապատասխան քանակի և որակի 35 տեսակի ապրանք:

4. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 14.07.2017թ. թիվ 40-1961 գրությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 05.04.2017թ. կնքված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10» ծածկագրով թիվ 04/068 պայմանագրի 3.1.7 կետի հիման վրա Պատվիրատուն 14.07.2017թ. պայմանագիրը միակողմանի լուծում է:

5. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 21.08.2017թ. թիվ 40-2256 գրությամբ Պատվիրատուն հայնել է, որ հիմք ընդունելով այն, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ներքնաշորերը չեն համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրերին և Պայմանագրով նախատեսված «մաքրող լաթ» ապրանքատեսակի մատակարարման վերջնաժամկետը լրացել է, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 21.08.2017թ. միակողմանի լուծում է պայմանագիրը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.02.2018թ. թիվ 04/26-3/2931-18 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 15.02.2018թ. թիվ 40-358 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 05.04.2017թ. կնքվել է «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10» ծածկագրով «Հայկական

ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի մատակարարման թիվ 04/068 պայմանագիր:

Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մինչև մայիս ամիսը ներառյալ մատակարարել համապատասխան քանակի և որակի 35 տեսակի ապրանք, մասնավորապես՝

	անվանումը	Չափման միավորը	քանակը
1	Կոմբինեզոն	հատ	300
2	Կոմբինեզոն	հատ	300
3	Կոմբինեզոն	հատ	400
4	Կոմբինեզոն	հատ	600
5	Կոմբինեզոն	հատ	600
6	Կոմբինեզոն	հատ	600
7	Կոմբինեզոն	հատ	400
8	Կոմբինեզոն	հատ	300
9	Կոմբինեզոն	հատ	300
10	Ներքնաշոր	հատ	315
11	Ներքնաշոր	հատ	315
12	Ներքնաշոր	հատ	415
13	Ներքնաշոր	հատ	600
14	Ներքնաշոր	հատ	600
15	Կոշիկ բանվորական	զույգ	3
16	Կոշիկ բանվորական	զույգ	8
17	Կոշիկ բանվորական	զույգ	58
18	Կոշիկ բանվորական	զույգ	25
19	Կոշիկ բանվորական	զույգ	118
20	Կոշիկ բանվորական	զույգ	132
21	Կոշիկ բանվորական	զույգ	65
22	Կոշիկ բանվորական	զույգ	31
23	Կոշիկ բանվորական	զույգ	10
24	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	1

25	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	3
26	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	14
27	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	22
28	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	43
29	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	30
30	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	19
31	Կոշիկ կիսաճտքավոր	զույգ	6
32	Կոշիկ կիսաճիտքավոր	զույգ	2
33	Մաքրող լաթ	Կգ	1300
34	Գոտի	հատ	14
35	Օձիք	հատ	90

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 14.07.2017թ. թիվ 40-1961 գրությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 05.04.2017թ. կնքված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10» ծածկագրով թիվ 04/068 պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից կատարվել է մասնակի մատակարարում: Չեն մատակարարվել՝

Կոմբինեզոն՝ 62 չափսի -600 հատ

Կոմբինեզոն՝ 64 չափսի -400 հատ

Կոշիկ բանվորական մետաղական՝ չի մատակարարվել ոչ մի զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 38 չափսի՝ չի մատակարարվել ոչ մի զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 39 չափսի՝ չի մատակարարվել ոչ մի զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 40 չափսի՝ չի մատակարարվել 7 զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 41 չափսի՝ չի մատակարարվել 13 զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 42 չափսի՝ չի մատակարարվել 17 զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 43 չափսի՝ չի մատակարարվել 8 զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 44 չափսի՝ չի մատակարարվել 13 զույգ

Կոշիկ կիսաճտքավոր՝ 45-2 և 46 չափսի՝ չի մատակարարվել ոչ մի զույգ

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից 26.05.2017թ. և 30.05.2017թ. մատակարարված ներքնաշորերը չեն համապատասխանում պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1՝ տեխնիկական բնութագրին:

Մասնավորապես պայմանագրով նախատեսված է, որ ներքնաշորը պետք է պատրաստված լինի՝ գործվածք- 100 տոկոս բամբակե, «Սարժա» ԳOUS 21790-2005, գործվածքի խտությունը 120-140 գր/մ^2 , սպիտակ հակաստատիկ կտորից, մինչդեռ Ընկերության կողմից մատակարարված ներքնաշորը պատրաստված է բյազ տեսակտի կտորից:

Պատվիրատուն նշված գրությամբ հայտնել է նաև, որ Պայմանագրի շրջանակներում չմատակարարված ապրանքների նկատմամբ Պատվիրատուն կիրառում է Պայմանագրի 3.1.1 ենթակետը, իսկ անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքի նկատմամբ Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերը:

Պատվիրատուն Ընկերությանը 14.07.2017թ. թիվ 40-1961 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պայմանագիրը 14.07.2017թ. համարվում է լուծված:

Այսպես՝ Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պատվիրատուն Ընկերությանը 14.07.2017թ. թիվ 40-1961 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պայմանագիրը 14.07.2017թ. համարվում է լուծված: Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 21.08.2017թ. թիվ 40-2256 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով այն, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ներքնաշորերը չեն համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրերին և Պայմանագրով նախատեսված «մաքրող լաթ» ապրանքատեսակի մատակարարման վերջնաժամկետը լրացել է, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 21.08.2017թ. միակողմանի լուծում է պայմանագիրը:

Այսպես «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 05.04.2017թ. կնքված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/10» ծածկագրով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի մատակարարման թիվ 04/068 պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 26.05.2017թ., 31.05.2017թ., 28.07.2017թ. և 18.08.2017թ. կնքվել են համապատասխանաբար թիվ 092, թիվ 283, թիվ 241/17 և թիվ 272 հանձնման-ընդունման արձանագրությունները, որոնց համաձայն Ընկերության կողմից մատակարարվել է, այդ թվում նաև Պայմանագիրը Պատվիրատուի կողմից լուծվելուց հետո, իսկ Պատվիրատուի կողմից ընդունվել են Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ապրանքները, բացի «մաքրող լաթ» և «ներքնաշոր» ապրանքատեսակներից:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 21.08.2017թ. թիվ 40-2256 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով այն, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ներքնաշորերը չեն համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրերին և Պայմանագրով նախատեսված «մաքրող լաթ» ապրանքատեսակի մատակարարման վերջնաժամկետը լրացել է, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 21.08.2017թ. միակողմանի լուծում է պայմանագիրը:

Խորհուրդն արձանագրում է, որ 14.07.2017թ. պայմանագիրը միակողմանի լուծելուց հետո Պատվիրատուի կողմից այնուամենայնիվ ընդունվել են Ընկերության կողմից մատակարարված ապրանքները, իսկ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 21.08.2017թ. թիվ 40-2256 գրությամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է, որ 21.08.2017թ. միակողմանի լուծում է պայմանագիրը, մինչդեռ նշված պայմանագիրը լուծվել է դեռևս 14.07.2017թ.:

Անդրադառնալով «ներքնաշորեր» ապրանքնատեսակի՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերին անհամապատասխան լինելու հիմքին, Խորհուրդը հայտնում է, որ Պայմանագրի 3.1.7 կետի 3.1.7.1 ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու համար անհրաժեշտ են հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

ա) մատակարարված ապրանքի անպատշաճ որակի լինելը.

բ) գնորդի համար ընդունելի ժամկետում այն փոխարինելու անհնարինությունը:

Պայմանագրի 3.2.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

Վերը նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Պայմանագիրն էական խախտման «ա» ենթակետով նախատեսված հիմքով լուծելը կդիտարկվի իրավաչափ այն դեպքում, երբ 3.2.4 կետով սահմանված կարգով Ընկերությանը ծանուցելուց հետո, անպատշաճ որակի ապրանքը Ընկերության կողմից չի փոխարինվում գնորդի համար ընդունելի ժամկետներում:

Խորհուրդն արձանագրում է, որ գործում բացակայում է ոչ պատշաճ որակի ապրանք մատակարարված լինելու և այն Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում փոխարինելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված գրություն:

Դրա հետ մեկտեղ Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, գնորդ իրավունք ունի իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

Միևնույն ժամանակ Պայմանագրի նույն կետի 3.1.2 ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, ապա գնորդն իրավունք ունի՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրի համապատասխանող որակի ապրանքվ անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել վաճառողից վճարելու պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Պայմանագիրը առանձնացնում է տեսակի պայմանի խախտմամբ ապրանքի մատակարարումը անպատշաճ որակի ապրանքի մատակարարումից: Ընդ որում երկրորդ դեպքը դիտարկվում է որպես Պայմանագիրը լուծելու հիմք: Տվյալ պարագայում Պատվիրատուն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 14.07.2017թ. թիվ 40-1961 գրության մեջ նշել է, որ անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքի նկատմամբ կիառում է Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերը, որոնք իրենց հերթին վերաբերում են տեսակի պայմանի խախտմամբ ապրանք մատակարարելու դեպքին:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն՝ «մաքրող լաթ» ապրանքատեսակի մատակարարման մասով: Ինչ վերաբերում է Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված «ներքնաշորեր» ապրանքնատեսակի՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով պարտավորության խախտմանը, ապա Խորհուրդը նշված փաստը հիմնավորված չի համարվում, քանի որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել պայմանագրով նախատեսված համապատասխան վերը հիշատակված պայմանները, մասնավորապես ապրանքը Պատվիրատուի համար ընդունելի ժամկետներում փոխարինելու մասին Ընկերությանը տեղեկացնելը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.02.2018թ. թիվ 04/26-3/2931-18 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝03804898) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**